«UNIMOBILE» ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1) «UNIMobile» բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) միջոցով մոբայլ բանկինգ ծառայությունից օգտվելու համար հաճախորդը պետք է ունենա Android կամ IOS օպերացիոն համակարգով աշխատող սարքին վիճակում գտնվող սարքավորում (սմարտֆոն, պլանշետ):

2) Հաճախորդի սարքավորումը պետք է միացված լինի ինտերնետին (մոբայլ բանկինգ ծառայությունը չի մատուցվում ինտերնետ կապի բացակայության պայմաններում):

3) Մոբայլ բանկինգ ծառայությունն ակտիվացնելու նպատակով հաճախորդը կարող է մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ ակտիվացնել այն ինքնուրույն՝ բիոմետրիկ նույնականացման միջոցով:

4) Հաճախորդն ինքնուրույն ներբեռնում է բջջային ծրագիրը համապատասխան հրահանգների միջոցով, որից հետո մուտք է գործում ծրագրի տարբերանշանով հավելվածը:

5) Հավելվածում հաճախորդը մուտքագրում է Բանկի կողմից տրամադրված «մուտքանուն» և «գաղտնաբառ» տվյալները:

6) Բանկի կողմից տրված գաղտնաբառն օգտագործվում է միայն առաջին մուտքի ժամանակ, որից հետո հաճախորդը պարտավոր է սահմանել նոր գաղտնաբառ:

7) Հաճախորդը Հավելվածով համապատասխան գործարքներն իրականացնում և վճարման հանձնարարականներն ուղարկում է Հավելվածի միջոցով համապատասխան հրահանգներ կատարելու միջոցով:

8) Սույն կանոնները տրամադրվում են Հաճախորդին թղթային տարբերակով՝ վերջինիս կողմից նման ցանկություն հայտնելու դեպքում: